ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և Գրականություն

Թեմա՝ Համագործակցային ուսուցման կազմակերպումը հայոց լեզվի դասերին

Կազմեց՝ Գոհար Մարգարյան

Նորաշենիկի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>>ՊՈԱԿ

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն ----------3

2. Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը----------3

3.Համագործակցային աշխատանքի առավելությունները----------4
4.Համագործակցային ուսուցման տարրերը----------5
5.Համագործակցային ուսուցման մեթոդներ----------6
6.Եզրակացություն----------12
7.Գրականության ցանկ----------13
8.Հավելված----------14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում ամենակարևոր երևույթը,ամենաուսուցողական առարկան, աշակերտների համար ամենակենդանի օրինակը հենց ուսուցիչն է:
Ուինսթոն Չերչիլ

Հայոց լեզվի ուսուցումը հանրակրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է: Հայոց լեզուն որոշում է միջնակարգ դպրոցում լեզվի դասընթացի բովանդակությունն ու ծավալը,առանձնահատկություններն ու նպատակը,կառուցվածքը,ուսումնական նյութի բաշխումն ըստ դասարանների ,կատարում է արդյունավետ և ժամանակակից մեթոդների ընտրություն:

Հայոց լեզուն մանկավարաժական գիտություն է,ուստի ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը բխում էնաև դիդակտիկայի սկզբունքներից:

Լեզվի դասավանդման մեթոդները կարող են դասակարգվել ըստ սովորողների գիտելիքների աղբյուրների ,ըստ աշխատանքի բնույթի:Բոլոր մեթոդները փոխադարձաբար կապված են իրար հետ և ծառայում են մի ընդհանուր նպատակի՝ լեզվի ուսուցմանը:
Ուսուցումը երկկողմանի աշխատանք է՝ ուսուցչի սովորեցնելը ,աշակերտի սովորելը:Ուստի ուսուցման մեթոդներն էլ ելնում են այդ առանձնահատկություններից:

Հայոց լեզվի ուսուցման գերակա նպատակը հաղորդակցության կարողությունների և դրանց միջոցով սովորողի անձի՝ որպես միջմշակութայինհաղորդակցության սուբյեկտի ձևավորումն է:
Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է,որիձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը:Հասարակական բոլոր փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգիվրա:

Ուսուցման գործընթացում համագործակցությանանհրաժեշտությունը

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այնավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային,դասավանդման նուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումըխմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է,որը ենթադրում է խմբայինաշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում էինարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար,ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների,սկզբունքների նիրադարձությունների ընկալումը,միջանձնային հմտությունների զարգացումը նայլն: Ժամանակակիցուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքրխմբային աշխատանքն է,որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների նժամանակակից մանկավարժների աշխատանքներում[3]:Փոքր

խմբայինաշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցայինուսուցում,համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալականուսուցում:Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ,որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտներըներքաշվում են մի գործընթացի մեջ,որտեղ նրանք կիսվում են գաղափարներով,փոխանակում են տեղեկատվություն,կատարում են ընտրություն և կայացնում ենորոշումներ: Դրանք են "Աշակերտների թիմային առաջադիմություն", "Խճանկար","Շրջվիր դեպի զույգդ","Պրիզմա","Խմբային հետազոտություն","Շրջագայությունպատկերասրահում" նայլն:
Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոնուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է[5]:Նշենք նաև,որ ժամանակակից կրթական գործընթացումկարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից,այլաշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնելնոր նյութը,զարգացնել ինքնուրույնության,համագործակցային,հետազոտականաշխատանք կատարելու բազում հմտություններ,օրինակ՝ տեղեկույթի որոնման,հավաքման,մշակման և այլն:Սակայն այդ հմտությունների ձեռքբերումըսովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է,իսկ ուսուցչինհնարավորություն է տալիս կատարելագործել,հարստացնել իր մեթոդականմոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:Այսօր մանկավարժներիմեթոդական զինանոցը բավականին հարուստ է,սակայն բոլորովին այլ է դրանցկիրառությունը:

Համագործակցայինաշխատանքի առավելությունները

Համագործակցայինուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում,մեծ ճանաչումէձեռք բերել:Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայնակադեմիականգիտելիքներ և հմտություններ սովորելը,այլև կարևոր է խմբայինզարգացմանմշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ(համագործակցայինհմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ(մտածողությանհմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ նհամագործակցելու[7]:

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասինաշխատել,ապա դա չի նշանակում,որ նրանց մղել ենք արդյունավետհամագործակցության:Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են,որ

կարող ենապահովել համագործակցային ուսուցում:Շատ են պատահում դեպքեր,երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերըարդյունք չեն ունենում:Առաջադրանքը,մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես,որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվմասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները:Համագործակցայինուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը:Առավել արդյունավետեն համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը:Այդպիսի խմբերում աշակերտներըառավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն:Չորս հոգանոցխմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատականպատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքիմթնոլորտ:Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից:Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում:Ակնհայտ է,որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայնդիտողի,լսողի,պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում,երբակտիվ մասնակցում է գործընթացին:Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում էնաև այն առումով,որ դասարաններում աշակերտների խտության մեծացմանարդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատականհարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբիհետ,ապա աշակերտները արտահայտվելու,քննարկելու ավելի քիչհնարավորություններ են ունենում:Փոքր խմբի պարագայում այդհնարավորությունները շատ ավելի մեծ են:Փոքր խմբերով ուսուցումը ունիհետևյալ նպատակները ։

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը

- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունննապահովելու հարցում

- խթանում է թիմային աշխատանքը,ապահով և նպաստավորմիջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

- **Համագործակցային ուսուցման տարրերն են.**

* դրական փոխկախվածության ապահովում, * դեմ առ դեմ փոխազդեցություն,

• անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,

• միջանձնային կամ փոքր խմբերով

աշխատանքի հմտություններ,

• խմբային գործընթացի մշակում,

• փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում էդասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը,օգնում էուսուցչին՝ հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ուպլանավորելու դասը,պայմաններ է ստեղծում ուսուցմանպահանջներից է[5]:Նշենք նաև,որ ժամանակակից կրթական գործընթացումկարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից,այլաշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնելնոր նյութը,զարգացնել , ինքնուրույնության,համագործակցային հետազոտականաշխատանք կատարելու բազում հմտություններ,օրինակ՝ տեղեկույթի որոնման,հավաքման,մշակման և այլն:Սակայն այդ հմտությունների ձեռքբերումըսովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է,իսկ ուսուցչինհնարավորություն է տալիս կատարելագործել,հարստացնել իր մեթոդականմոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Այսօր մանկավարժներիմեթոդական զինանոցը բավականին հարուստ է,սակայն բոլորովին այլ է դրանցկիրառությունը:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ, դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Ուսոցիչը միանգամից մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից:Մեթոդների ընտրությունը կախված է նաև.

• նյութի բովանդակությունից

• ուսումնական նյութի ծավալից և բարդությունից

• նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ

.աշակերտների շահագրգռվածությունից և համագործակցային

հմտությունների մակարդակից

• աշակերտների տարիքային առանձնահատկություններից

• ուսումնական ժամաքանակից

• ուսուցման նյութատեխնիկական պայմաններից

• ուսուցիչ- աշակերտ փոխհարաբերություններից

.դասարանում աշակերտների թվաքանակից

• ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլն:

Մանկավարժական տեխնոլոգիաների, համագործակցային մեթոդների նկարագրությունները նպատակ չունեն առաջարկելու ուսուցման կազմակերպման հստակ դեղատոմսեր, բայց կարող են նախանշել դասավանդման արդյունավետության ապահովման բնութագրիչները:

Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները:

Գոյությունունենհամագործակցայինուսուցմանտարբերմեթոդներ, որոնքունենինչպեսնմանություններ, այնպեսէլտարբերություններ: Ստորևներկայացնումենքհամագործակցայինուսուցմանմիշարքմեթոդներ: Դրանքեն՝աշակերտներիթիմայինառաջադիմություն, խճանկար, շրջագայությունպատկերասրահում, երեքբանալիևմեկկողպեք, հինգրոպեանոցազատշարադրանք:

1.Աշակերտներիթիմայինառաջադիմությանմեթոդ:
ՀամագործակցայինուսուցմանայսմեթոդըմշակվելէՋոնՀոփկինսիհամալսարանիպրոֆեսորՌոբերտՍլավինիկողմից:
Այսմեթոդըխթանումէաշակերտներիուսումնառությունը:
Այստեղէականէայնհանգամանքը, որգնահատվումէաշակերտներիառաջընթացը:

Այսմեթոդըլուրջխթանէցածրառաջադիմությամբաշակերտներիհամար, քանիորնույնիսկչնչինառաջընթացիպարագայումնրանքկարողեններդրումունենալթիմիարդյունքում:Իսկմիջինուբարձրառաջադիմությամբաշակերոներըպետքէմիկողմից օգնենիրենցդասընկերներին,մյուս կողմից կարողանան պահապանելուբարելավել իրենց նախորդ ցուցանիշները:Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այնէ,որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛առանձին աշակերտների, և՛խմբերին:

2. Խճանկար :Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ : Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Առնսոնի և նրա գործընկերների կողմից այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը:
Աշակերտներինկարելիէբաժանելչորսկամհինգանդամունեցողտարբրասեռխմբերը: Յուրաքանչյուրխմբինտալդասիմեկհատվածնաշխատելուհամարորոշակիժամանակ: Այնլրանալուցհետոխմբերըներկայացնումենիրենցհատվածը, կարդումեն, բառերըբացատրում, դուրսգրումուղղագրականարժեքներկայացնողբառեր, դրանցովկազմումնախադասություններ, կատարումլեզվականաշխատանքներնայլն: Յուրաքանչյուրխումբսովորումէդասիմեկհատվածը, բայցարդյունքումսովորումենամբողջդասը՝ դադարեցնելովաշխասանքընուշադիրլսելովբոլորխմբերիպատասխանները: Կարողէունենալնանփորձագետներիխումբ՝ «Ջիգատ 2», որիփուլերնեն

• նյութիուսումնասիրությունտեղեկատվությանհավաքում

• աշխատանքփորձագիտականխմբում

• աշխատանքուսումնականխմբում
• ավարտականաշխատանք

• ամփոփում

3.Շրջագայությունպատկերասրահում:Սա «Խճանկար» մեթոդիտարատեսակէ, որինպատակնէփոխանակելտեղեկություններ, մշակելգաղափարներնկատարելանդրադարձինչպեսնանզարգացնելլսելու, ինքնուրույնաշխատելու, քննադատաբարնստեղծագործաբարմտածելու, ցածրաձայնխոսելու, աշխատանքիարդյունքներկայացնելուհմտություններ: Կրտսերտարիքիաշակերտներիհետաշխատելիսխմբերինկարելիէտալնույնառաջադրանքըկամխնդիրը:
Աշխատանքըվերջացնելուցհետոհամեմատելովմյուսխմբերիաշխատանքներիհետ՝աշակերտներըհետադարձկապենապահովում:

4. Երեք բանալի և մեկ կողպեք:Աշխատանքըկարելիէկատարելզույգերովկամխմբով: Այսմեթոդըկարելիէկիրառելայնպիսիդասերիիմաստիընկալմանփուլում, որոնքբավականինծավալունեն, նույնությունկամերևույթինվերաբերողմիշարքհատկանիշներկան:Աշակերտներինառաջարկումենքդասիցդուրսգրելերեքնախադասություն(երեքբանալի), որըկարևորէայդնյութըյուրացնելուհամարբնագրիցընտրելմեկինախադասություն (կողպեք),որըկամփոփի, կընդհանացնիասելիքը, միտքը, գաղափարը:
5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:Հինգրոպեանոցազատշարադրանք մեթոդըկարողէկիրառվելինչպեսդասիխթանմանփուլում, այնպեսէլկշռադատման՝ ելնելովդասինպատակիցևթեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ

րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը,որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Համագործակցային դասի՝ որպես արդյունավետ ուսուցման մեթոդ լինելը գնահատելու համար կատարել եմ հետևյալ հետազոտությունը՝

1. դասը վարել եմ ավանդական մեթոդներով, գրանցել եմ և՛ առավելությունները, և՛ թերությունները:
2. դասը վարել եմ համագործակցային ուսուցման մեթոդով (երեք բանալի և մեկ կողպեք), դարձյալ գնահատել արդյունքները:

Դիտարկում կատարել եմ 9-րդ դասարանում գրականությունից:Աշակերտները դասի թեման լավ էին յուրացրել (յուրաքանչյուրն իր ունակությունների չափով), ներկայացրին համակարգված, հստակ ձևակերպումներով:Իմ կողմից հնչեցրած հարցերին տալիս էին կոնկրետ պատասխաններ, իսկ այնպիսի հարցերի որոնք պահանջում էին վերլուծություններ, դատողություն անելու կարողություններ, աշակերտները տալիս էին կցկտուր, գրեթե առանց հիմնավորումների պատասխաններ, բանավոր խոսքի ձևակերպման մեջ խեղճանում էին:

Ես հասկացա , որ կա խոսք կառուցելու խնդիր, քանի որ աշակերտները ունեցել են բանավոր խոսք ձևավորելու թերացումներ: Որոշեցի նույն աշխատանքը կազմակերպել համագործակցային ուսուցմամբ՝<<Երեք բանալի և մեկ կողպեք >> ժամանակակից մեթոդով :

Աշակերտներին առաջարկում եմ դասից դուրս գրել երեք նախադասություն(3 բանալի) կամ պարբերություն (մեկ կողպեք), որը կամփոփի, կընդանրացնի ասելիքը: Տարբեր աշակերտներ կընտրեն տարբեր բանալիներ և կողպեքներ:

Դասարանը բաժանում եմ երեք խմբի: Խմբերը նախապես ուսումնասիրած են լինում թեման :

I խումբն աշխատում է անհատական

II խումբը՝ զույգային

III խումբը խմբային

Խմբերը քննարկում են և դուրս են բերում <<բանալիները>>(3 նախադասություն), ապա ձևակերպում են որպես մեկ ամփոփ միտք, որը հանդիսանում է խմբի կողպեքը: Այնուհետև գնահատում եմ խմբերին՝ ներկայացնելով գնահատականը:Գնահատում եմ միավորային գնահատականով:

Ստուգման ժամանակ պարզեցի, որ 7 և բարձր գնահատական ստացել են I խմբի 10-ից 3-ը, II խմբի 10-ից 5-ը, III խմբում ընդգրկած լինելով նաև թույլ աշակերտներին 7-ից բարձր ստացան 8-ը: III խմբի գնահատումը կատարել եմ անհատապես՝ հաշվի առնելով իրենց մասնակցությունը ու իմ հարցերին պատասխանելու հմտությունը:



Այսպիսով <<Երեք բանալի և մեկ կողպեք >> ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառումը նպաստեց իմ նպատակի իրականացմանը. ապահովեցի բոլոր սովորողների մասնակցությունը, համագործակցությունը, ուսուցանվող նյութի առավել խորքային իմացությունը: Աշակերտները ինքնուրույն կարողացան գտնել հիմնական գաղափարներն արտահայտող նախադասությունները և հիմնավորեցին, կարողացան բնութագրել կերպարներին, առանձնացրին դրական և բացասական կողմերը, փոխեցին վերջաբանը: Միմյանց լրացնելով , փոխօգնությամբ պատասխանը հնչեց ավելի գեղեցիկ, խոսքը դիպուկ, ստեղծագործական մասում պահպանեցին գեղարվեստական երկին բնորոշ տարրերը: Այս երկու աշխատանքները իրականացնելուց հետո հազմեցի համեմատական բնութագրի և պարզ դարձավ , որ առաջին ուսուցման ժամանակ ես իմ նպատակին հասա 40 %-ով, երկրորդի ժամանակ 85 %-ով:


0,9
0,8
0,7
0,6
0,5
0,4
0,3
0,2
0,1
0
անհատական
համագործակցային
Столбец1
Столбец2
Столбец3

Եզրակացություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Համագործակային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ: Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ:Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ: Դասալսումների ժամանակ ուսուցիչների կողմից կիրառվում են բազում մեթոդներ, սակայն դրանք գրեթե միշտ կա՛մ չեն հասնում տրամաբանական ավարտին՝ դասի նպատակին, կա՛մ էլ ժամանակի մեջ չեն տեղավորվում, խմբերը համասեռ չեն կազմվում, խմբերում թիմային աշխատանքը չի ստացվում, ոչ բոլոր և են ակտիվություն ցուցաբերում, անհրաժեշտ պահանջները կա՞մ չեն հատկանում, կա՛մ էլ թերի են կատարում: Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բայահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում:

Համագործակցային ուսուցումը նպաստում է.

• անձի զարգացմանը և անհատականության ձևավորմանը

• հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովմանը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ս.Վ.Գյուլբուդաղյան<<Հայոց լեզվի մեթոդիկա>>

2.Հայեցակարգ Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում հ. լեզվի և գրականության դասավանդման, 2017

3. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ», Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, Տիգրան Մեծ, 2004, 319 էջ 3. Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում.Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006. 122 էջ:

4. Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում, վերապատրաստողի ուղեցույց, Երևան: «Անտարես»: 2006, 95 էջ:

5. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:

6. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանա կակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:

7. Ա. Է. Ափոյան , Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014, էջ 336

Հավելված

Դասի օրվա պլան

Ամփոփման դաս

Առարկա՝ մայրենի

Դասարանը՝ 5-րդ

Կիսամյակը՝ 1-ին

Դասիտիպը՝ Ամփոփման դաս

Դասիտևողությունը՝ 1 դասաժամ (45 րոպե)

Թեմա տիկ խումբ՝ «Իմ բարձրանուն, իմ քաղցրանուն»

Օգտագործվողնյութեր, տեխնիկականմիջոցներ՝ տեղեկատվական և հաղորդակ-ցական տեխնոլոգիաներ՝ պրոյեկտոր, համակարգիչ, դասագիրք , պաստառներ:

Սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման եղանակները՝ ֆրոնտալ, անհատական, խմբային, զույգերով:

Ուսուցման տեխնոլոգիաներ՝ համակարգչային ուսուցման տեխնոլոգիա, համագործակցային ուսուցման տեխնոլոգիա:

Ուսուցման մեթոդներ՝ նախագծային ուսուցման մեթոդ, բացատրական-ցուցադրական մեթոդ, զրույց, զեկույց, համառոտ դասախոսության մեթոդ:

Ամբողջականպատկերևդասինպատակ ՝

Դասինպատակնէ՝

Զարգացնել«հայրենիք» հասկացությանվերաբերյալպատկերացումները.

Զնավորելմոդելներստեղծելուևթղթին հանձնելուհմտություններ.

Խթանելսովորողներիհամագործակցայինհմտություններիզարգացումը.

Զարգացնել հաղորդակցականևհամագործակցայինկարողությունները.

Զնավորել վարժ, արտահայտիչևհասկանալով կարդալու ունակություններ.

Զնավորել տեքստի ուսումնասիրության հմտություններ.

Ամրակայել ստեղծագործական հմտությունները.

Զարգացնել քննական մտածողություն.

Զնավորել ինքնակազմակերպմաննինքնադրսևորմանհմտություններ.

Զարգացնել բանավորևգրավորկապակցվածխոսք.

Զարգացնել հետազոտական կարողություններ.

Ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները.

Խորացնել բառի ուղիղ և փոխաբերական իմաստների տարբերակման շուրջ գիտելիքները:

Վերջնարդյունքները

Սովորողըկկարողանա՝

✓ սահմանել «հայրենիք» հասկացությունը,

✓ մոդելավորել իրենց պատկերացումները «հայրենիք» հասկացության վերաբերյալ,

✓ սահմանի այն ամենն, ինչը կարող է դառնալ հայրենիքի կերտման հիմքը,

✓արտահայտիսեփականտեսակետը, բերիպարզհիմնավորումներ, կատարիընդհանրացումներևպարզդասակարգումներ,

✓քննարկիհիրցանկությունները, ճանաչիներկայացնի իր զգացումները՝մտքերնարտահայտելովպարզևհասկանալիձևով, պահպանիհայերենիուղղախոսականկանոնները,

✓տարբերձևերովևեղանակներովվերարտադրիլսածը, ընթերցածը, դիտածը,

✓նկարագրիտարաբնույթերևույթներ, ցույցտադրանցփոխկապակցվածությունը,

✓մասնակցիքննարկումների, բանավեճերի, լսիևհասկանաարտահայտվածմտքերը, ներկայացնիհիրմոտեցումները, հանդեսգափաստարկվածխոսքով

✓տարբերձևովներկայացնիմտքերնուզգացումներըլսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրենհետաքրքրողհարցերիմասիննպատասխանիտրվածհարցերին,

✓նկարագրիառարկաներևերևույթներ՝օգտագործելովհատկանիշցույցտվողբառեր

✓հասկանալովլուռևբարձրաձայնընթերցիգրականնգիտահանրամատչելիտեքստեր՝ պահպանելովկարդալուհամապատասխանարագությունը

✓գտնիբացատրությանկարիքունեցողբառերիիմաստըբառարաններիցկամայլաղբյուրներից, մեկնաբանիդրանցկիրառությունըհամատեքստում,

✓գրավորխոսքումպահպանիտեքստերումհանդիպածբառերիուղղագրությունը

✓ընկալիգեղարվեստականստեղծագործությանկերպարային, տրամաբանականզգայականմիասնությունը,

✓համեմատիուհակադրիհայրենիքի վերաբերյալ տարբեր արտահայտությունները,
✓արդյունավետհամագործակցիևհաղորդակցվիընկերներիհետ՝ստանձնելովորոշակի պատասխանատվություն, դրսևորելովհամբերատարևբարեհամբույրվերաբերմունք,
✓հարգանքովվերաբերվիմարդկանցևնրանցարտահայտածտեսակետներին:

Ընդհանրական խաչվողհասկացություններ՝

Օրինաչափություն. Որոշակիսկզբունքովկրկնվողերևույթներ. հայրենիքը բնութագրող նույնական, հայրենիքին վեհություն, կարևորություն հաղորդող արտահայտություններ

Պատճառևհետևանք. Պատճառահետևանքայինկապըհայրենիքի՝ ամենամեծ հրաշալիքը համարվելու գործում:

Կառուցվածքևգործառույթ. Ի՞նչն են ընտրում խմբերը որպես հայրենիքի ամենաբնութագրական հայտանիշ:

Կայունությունևփոփոխություն. Հայրենասիրական արժեքներ և իրավիճակով պայմանավորված ընտրություն:

Անհատներևհարաբերություններ. Հայրենիքի շուրջ ձևավորված կապեր:

Ժամանակևտարածություն. Որտե՞ղ է տեղակայված մեր հայրենիքը և՞նչ իրադարձություններ են ծավալվում մեր հայրենիքի շուրջ:

Անհատականևմշակութայինարժեհամակարգ. Մեր սերն առ հայրենիք, մարդուստեղծածարժեքներիազդեցությունը հայրենանվեր գործունեության ուղղությամբ:

Փոփոխությունևզարգացում. Բնականորենկամուղղորդվածփոփոխությունները, որոնքապահովումենզարգացում:

Միջառարկայականկապեր՝

- Մանկականևգիտահանրամատչելիգրականություն. Թեմային վերաբերող այլհեքիաթների, պատմվածքների, առակներիընթերցումևքննարկում:

- Կերպարվեստ. Հայրենիքին վերաբերող տարբերոճերիևժանրերինկարներիդիտում, դրանցշուրջպատմություններիհյուսում, քննարկվողթեմաներով

- նկարների, տարբերնյութերովաշխատանքներիստեղծում (խճանկար, ծեփում, ապլիկացիա, կոլաժ), ինքնաշենգրքույկներինկարազարդում, պաստառներիձևավորում, ինքնաարտահայտումգույներիմիջոցով:
- Տեխնոլոգիա. խմբայինաշխատանքիմիջոցովտարբերնյութերով և ինքնաարտահայտումպատկերներիմիջոցով:

Գնահատում՝ 1-4-րդդասարաններումն 5-րդդասարանիառաջինկիսամյակումմիավորայինգնահատումչիիրականացվում: Ընթացիկգնահատումըկատարվումէբնութագրմանմիջոցով, իսկ, որպեստարեկանամփոփիչգնահատական, կազմվումէյուրաքանչյուրսովորողիուսումնականառաջադիմությանբնութագիրը՝համաձայնկրթությանպետականկառավարմանլիազորվածմարմնիսահմանածկարգի:

Տնայինաշխատանք. Քանիորամփոփման դասընախատեսվածէմեկ դասաժամիհամար, տնային աշխատանքը տրվել էր նախապես՝ առաջարկելով նախապես բաժանված խմբերով իրականացնել նյութերի նախապատրաստում, մշակում, դերաբաշխում:

Դասիանդրադարձ. Տնայինստեղծագործականաշխատանքինբնութագրերիվերլուծությանարդյունքումուսուցիչըվերէհանումսովորողներիթյուրըմբռնումները՝դրանցանդրադառնալուևուղղորդողհարցադրումներովշտկումներանելունպատակով:

Դասիընթացք (նկարագրություն)

Նախապատրաստական աշխատանքներ

Նախորդ ժամին աշակերտները նախապես բաժանվել են խմբերի և ուսուցչի կողմից ստացել իրենց առաջադրանքները:

1-ին խումբ՝ «Հայրենի՛ք, իմ բարձրանու՛ն, իմ քաղցրանու՛ն»:

2-րդ խումբ՝ «Հայրենի՛ք, իմ տուն»,

3-րդ խումբ՝ «Մայր-հայրենիք»,

4-րդ խումբ՝ «Հայրենիքը տարվա տարբեր եղանակներին»:

Սկիզբ (խթանում)

Ուսուցչի կողմի սովորողներին ողջունում, հաճախելիության գրանցում:

Օրվա դասի նպատակի և վերջնարդյունքների սահմանում:

Ուսուցիչը «Համառոտ դասախոսություն» մեթոդով դասարանին է ներկայացնում հայրենիքը որպես գերագույն արժեք, որից հետո աշակերտների օգնությամբ գրատախտակին գծվում է հայրենիքը բնութագրող արժեքների ծառը: Ծառը կազմվում է թեմայի վերաբերյալ հարցադրումների արդյունքներով, մասնավորապես՝

- Ի՞նչ է հայրենիքը ձեր պատկերացմամբ:

- Ի՞նչ եք հասկանում «հայրենիք» ասելով:

Ուսուցիչը, դրսևորելով աշակերտակենտրոն մոտեցում, համատեղ ամփոփում է ներկայացված պատասխանները և արդյունքում համակարգում արտահայտված մտքերը:

Հիմնականմաս (իմաստիընկալում)

Սովորողներընստում են նախապես 4 սովորողիցբաղկացածխմբերով:Սովորողներինառավելագույնսներգրավելուհամարխմբիներսում նախապեսկատարվելէդերերիբաշխում, որպիսիք են՝ իրենց ստացած առաջադրանքի առանձին հատվածների ընթերցող, մտքերըգրառող, ժամանակիկառավարումըվերահսկող, վերջնարդյունքը ներկայացնող:Սովորողներինտրամադրվումէաշխատանքիկատարմանուղեցույց, որում մասնավորապես նշված է, որ սովորողները առանձին խմբերով ընթերցում են իրենց առաջադրանքի նյութը, խմբային աշխատանքի միջոցով դուրս են բերում այդ հատվածի ընդհանրական միտքը, կազմում են զեկուցման ենթակա գաղափարը:Խմբերիներկայացուցիչներըհակիրճներկայացնումենիրենցխմբիընտրած ընդհանուրհատկանիշներիվերաբերյալգրառումները, իսկուսուցիչըհետևումէ, որխմբերումկրկնություններչլինեն:

Ամփոփման մաս

Իրենց աշխատանքները ներկայացնում են սահիկահանդեսի և պաստառների միջոցով: Այս աշխատանքում ակնհայտ են դառնում աշակերտների ունեցած գիտելիքներն ու կարողությունները:

Խմբերի սեղաններին դրված են իրենց կողմից պատրաստված նկարներ, որոնք բնութագրում են յուրաքանչյուրի առաջադրանքը ըստ դասագրքի:

Ուսուցիչն ամփոփում է խմբերի կատարած աշխատանքը՝ հիմք ընդունելով նրանց կողմից դուրս բերված հիմնական մտքերը՝ որպես խմբային աշխատանքի վերջնարդյունք: Ուսուցիչը, մատնանշելով մեր հայրենիքի համար ծանրագույն շրջանը, մեջբերում է Հ.Սահյանի խոսքերը. «Հավատա՛լ մեր սպասած լավագույն օրերին, հավատալ մարդուն, աշխարհին, սեփական ուժին և արժանապատվությանը: Կանք ու կլինենք: Բարձրանանք ինքներս մեզանից»:

Ամփոփումից հետո և արդեն իսկ ներկայացված նյութի հիմքով ուսուցիչն առաջարկում է կազմել նախագիծ՝ «Իմ բարձրանուն, իմ քաղցրանուն» թեմայով:

Նախագծիթեմա «Իմ բարձրանուն, իմ քաղցրանուն»

Հիմնականգաղափար.

Յուրաքանչյուրմարդուհամարաշխարհիամենամեծհրաշալիքնիրհայրենիքնէ:

Նպատակը.

Հայրենիքի՝գերագույննառաջնայինարժեքլինելուգաղափարիընկալումը՝առանցտարածաժամանակայինսահմանափակումներ:

Ակնկալվողարդյունքները. Սովորողները.

- կկարողանանմեկնաբանել, թեորնէհայրենիքը, արդյո՞քայնմիայնտարածքէ, թեունիանցյալովկերտվածպատմություն,
- կկարողանանհամեմատելտունըևհայրենիքը,
- կկարողանանդիտարկելմորկերպարըհայրենիքիհետզուգահեռ,
- կդիտարկենհայրենիքըտարբերեղանակներին, կառանձնացնենհիմնականբնութագրիչները:

Հարցեր.

- Ինչպե՞սկմեկնաբանեք «հայրենիք» հասկացությունը, ինչպիսի՞պատմականանցյալունիմերհայրենիքը:

-Ինչպիսի՞ բնությունունիմերհայրենիքը:

-Որո՞նքենհայրենիքիևտանառնչությունները:

-Արդյո՞քընդհանրություններկանմորևհայրենիքիմիջև:



Գրիգոր Զոհրապի <<Այրին>> նորավեպի հերոսուհու՝ Զարդարի կերպարը (դասի պլան <<Գրականություն>> առարկայից)

Դասարանը- 8-րդ

Դասի նպատակները –

1.Աշակերտները ընկալեն Զոհրապի ներկայացրած աշխարհը: 2.Հասկանան արևմտահայերեն խոսքը:

3. Աշակերտներին գեղարվեստական խոսքի միջոցով համոզել, որ պանդխտությունը հայի համար աղետ է:

4. Ցույց տալ Զոհրապի ռեալիզմը հերոսներ և միջավայր կերտելիս:

Դասի կահավորումը – Զոհրապի մեծադիր նկարը, գրքերը, վահանակներ՝ գրողի ասույթներով, պատի թերթ, <<Այրին>> նովելի նկարազարդումներ (աշակերտների կողմից կատարված)

Միջառարկայական կապ – Հայոց լեզվի հետ (արևմտահայերենի ընկալում, բացատրություն), հայոց պատմության հետ (արևմտահայ իրականությունը 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին, պադխտությունը՝ սոցիալական, բարոյական աղետ), կերպարվեստի հետ

Մեթոդներ, հնարներ – Վերլուծել, փոքրիկ շարադրանք, մտագրոհ, տեքստային աշխատանք, խմբային աշխատանք

Դասի տիպը – Համակցված

Դասի ընթացքը

1. Կազմակերպչական մաս

2. Անցած նյութի հարցում (<<Զոհրապի ներկայացրած աշխարհը>>)

ա. Մտագրոհ՝ ինչպիսի՞ն է Զոհրապի հերոսների աշխարհը

բ. Բնութագրել Մարտիրոսին

գ. Ներկայացնել Զոհրապի պատկերած միջավայրը

դ. Ասել արևմտահայերեն բառերի ու քերականական ձևերի արևելահայերեն տարբերակները

3. Նոր նյութի հաղորդում

Խթանում

Դասարանը բաժանվում է խմբերի, և հանձնարություն է տրվում մտորել այս հարցի շուրջը՝ <<Ինչու՞ է Զարդարը այրի>>: Աշակերտների պատասխանները ուղղորդում և լրացնում է ուսուցիչը:

Իմաստի ընկալում

Հանձնարարվում է գտնել հերոսուհուն բնութագրող հատվածները, նրան առնչվող հանգամանքները: Այնուհետև հանձնարարվում է փոքրիկ շարադրություն՝ <<Զարդարի լուռ ցավերը>>: Կարդում են ութ-տասը աշակերտներ:

Կշռադատում

Աշակերտները բնութագրում են հերոսուհուն, ներկայացնում նրա ողբերգության հիմքերը, պանդխտությունը՝ որպես հայի ճակատագիր և չարիք: Կատարվում են դատողություններ հոգեբանական նրբերանգների, գրողի վարպետության ու սրտացավության վերաբերյալ: Խոսվում է <<Այրին>> ստեղծագործության մասին՝ որպես նորավեպի:

Անդրադարձ

Հանձնարարվում է գտնել հերոսուհուն ամենաբնորոշ հատկանիշը, կապը միջավայրի հետ, նմանությունը մյուս հերոսի՝ իր ամուսնու հետ:

Գնահատում

Գնահատվում են տասը – տասներկու աշակերտներ:

Տնային առաջադրանք

Հանձնարարվում է մտորել այս հարցի շուրջը՝ <<Այրին միայն զո՞հ էր, թե՞…>>, և ամբողջացնել շարադրությունը: Նաև վերնագրել նորավեպի հատվածները և կատարել տեքստային ու բառային մանրակրկիտ աշխատանք

Օրվա պլան

Դասարան – 7-րդ

Ամսաթիվ – 22.09.2023թ.

Դասի թեման – «Գոյականի թիվը» թեմայի ամփոփում

Դասի տիպը-Ամրապնդման դաս

Դասի նպատակը- Տարբերել եզակի գոյականը հոգնակիից

Դասի խնդիրները – Թիմային աշխատանք և ինքնուրույն մտածողություն Վերջնարդյունքը - 1.Ներկայացնել գոյականի՝ հոգնակիում ստացած վերջավորությունները

2.Կազմել եզակի թվով դրված գոյականների հոգնակի թիվը

3. Բացատրել գոյականի հոգնակիի կազմության շեղումները

4. Խմբավորել հավաքական և հոգնակի թվով գոյականները, թվարկել նրանց տարբերությունները:

Մեթոդները - Մտագրոհ, Т-աձև աղյուսակ, համագործակցային ուսուցման մեթոդ Կոմպետենցիաները - Լեզվական կոմպետենցիա և գրագիտություն: Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների:

Առաջադրական բայեր- համեմատել, գտնել տարբերությունները, բացատրել:

Դասի ընթացքը - Դասարանը բաժանվում է չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ ստանում է իր առաջադրանքը:

Առաջադրանքը հետևյալն է՝

1) Բառաշարքից դուրս գրել մեկ առարկա ցույց տվող բառեր (եզակի)

2)Բառաշարքից դուրս գրել մեկից ավելի միատեսակ առարկաներ ցույց տվող բառեր(հոգնակի)

3) Բառաշարքից դուրս գրել գոյականներ, որոնք չունեն եզակի թիվ, դրանք միշտ հանդես են գալիս հոգնակի թվով

4)Բառաշարքից դուրս գրել գոյականներ, որոնք չունեն հոգնակի թիվ, դրանք հանդես են գալիս եզակի թվով Այնուհետև հանձնարարել լրացնել T-աձև աղյուսակը: Այնուհետև աշակերտներին հանձնարարել ներկայացնել գոյականի թիվը անգլերենում: Հանձնարարել գտնել տարբերությունները:

Տնային աշխատանք – Կազմել տրված բառերի հոգնակին և հետևել ուղղագրությանը; Աշակերտներին գոյականի թվի մասին գաղափար տալուց հետո վերջնարդյունքը պետք է լինի լեզվական կարողունակության ձևավորելը: Լեզվական կարողունակություն ձևավորելու համար աշակերտներին հանձնարարել վերհիշել, թե ինչպես են կազմում գոյականի հոգնակի թիվը անգլերենում, նշել նմանությունը և տարբերությունը: